ներ կային իր ճանապարհի վրայ։ Նրա առաջին քայլը անյաջողութեան է հանդիպում. նա չի կարողանում շարունակել իր ճանապարհը։

Այս երեւոյթը շատ տարբեր ձեւերով է պատճառաբանուած Եղեանի հրատարակած փաստաթղթերի մէջ։ Թիւ 5 փաստաթուղթն ասում է. «Ծերունի կաթողիկոսը մեռաւ (1680) եւ պատգամաւորութիւնը ստիպուած եղաւ վերադառնալ Հայաստան, բացի Իսրայէլ Օրիից, որը մասնաւոր ձեւով Եւրոպա անցաւ»։ Թիւ 2–ը պատճառը համարում է «անհաւատներին». «Անհաւատները արգիլեցին պատգամաւորութեանը գնալ աւելի առաջ — ասում է նա — որի հետեւանքով մեռաւ կաթողիկոսը՝ ընկճուած վշտից ու տառապանքից, որ չի կարողանում իրագործել իր սրտում ունեցած ծրագիրները»։

Ըստ թիւ 6–ի (նաեւ թիւ 8–ի) այդ ժամանակներում պատերազմ կար վրացիների եւ պարսիկների մէջ, Հայաստանը լցուած էր պարսիկ զօրքերով եւ այդ պայմաններում կաթողիկոսի ներկայութիւնը երկրում երեւի անհրաժեշտ լինելով կամ մի այլ պատճառով, սուրհանդակ են ուղարկում Պոլիս եւ պատգամաւորութիւնը յետ կանչում. «Ի դալ ըռպի1) զօրքն ի յերկիր մեր, սկսաւ պատերազմիլ հետ կուռճուն. տեսաք որ այլ մեր խորհուրդն չի կատարիր շուտով, սակ2) ուղարկեցաք որ դարձան յետ եւ խափանեցաւ խորհուրդ մեր» — գրում են Ղարաբաղի մելիքները Պետրոս Մեծին։

Թերեւս աւելի ճիշդ է այն, որ այդ ժամանակներում տաճիկները պատերազմ ունենալով Վենետիկի հետ, ճանապարհը դէպի Եւրոպա կարող էր փակ լինել։ Անշուշտ այդ է ակնարկում Իսրայէլ Օրին իր ցուցմունքների մէջ, երբ ասում է. «Տեսնելով, որ պատերազմի ժամանակ լինելով, առաջ անցնելը դժուար է, վերադարձան իրենց երկիրը» (Փաստ., թիւ 44)։

Ցամենայն դէպս փաստն այն է, որ պատգամաւորութիւնը հայ ժողովրդի ազատութեան համար, յանձն է առնում մի պատասխանատու առաքելութիւն, գնում է մինչեւ Պոլիս, սակայն իրենից անկախ պատճառներով, իր նպատակին չի հասնում։

Պոլսում մեռնում է ծերունի կաթողիկոսը, վշտից ու տանջանքներից ընճուած։ Նա իր զառամեալ հասակով եւ քայքայուած առողջութեամբ, իր ուսերի վրայ վերցրել էր մի ծանր բեռ, մի դժուարին առաքելութիւն — յանուն իր հօտի փրկութեան։

Եւ նրա փխրուն մարմինը չդիմացաւ այդ ծանրութեանը ու խորտակուեց։

Բայց նա մեռաւ իր պարտականութեան ճանապարհին, այդպիսով հանդիսանալով Հայկական Դատի եւ Հայաստանի անկախութեան գաղափարի առաջին քաղաքական–դրօշիչ նահատակը։

Բարեբախտաբար, նրանից յետոյ էլ հայերը չյուսահատուեցին։ Նրանից յետոյ էլ Հայաստանի անկախութեան գաղափարը մնաց հայ ժողովրդի ղեկավար տարրերի նուիրական նպատակը։ Պատճա՞ռը. որովհետեւ Հայաստանի քաղաքական դրութիւնը շարունակում էր մնալ նոյնը — օտարի հպատակ — իսկ դրանից դուրս գալու միակ ճանապարհը անկախութիւնն է, քաղաքական ազատութիւնը։

Եւ ահա մենք տեսնում ենք, որ Ջուղայեցու յաջորդ Եղիազար կաթողիկոսի օրով, նորից հայ իշխանները հաւաքւում են ժողովի էջմիածնում եւ նորից որոշում են՝ կաթողիկոսին ուղարկել դէպի Եւրոպա — օգնութիւն հայցելու։ Կաթողիկոսը ճանապարհւում է, հասնում է մինչեւ Կարին, բայց «անհաւատների պատճառով» աւելի առաջ գնալ չկարողանալով, ձեռնունայն դառնում է էջմիածին։

Ինչպէս տեսնում էք, Հայաստանի անկախութեան պահանջը դարձել էր մի այնպիսի անհրաժեշտութիւն, որ այլեւս մեռնելու չէր։ Ջուղայեցուց յետոյ շատերն աշխատեցին այդ ուղղութեամբ — երախտաւոր գործիչների ու նահատակների մի ամբողջ շարան. եւ թէպէտ նրանց ճիգերը հետապնդուող արդիւնքը չտուին, բայց եւ այնպէս Հայաստանի անկախութեան գաղափարը նորից չմեռաւ։

Այսօր էլ Հայաստանը ստրուկ է, բաժանրաժան եղած օտարների մէջ, արիւնոտուած,

---

1) Ըռպի — պարսից. մելիքների եւ միւս բոլոր հայերէն գրութիւնների մէջ պարսիկ, պարսից են. բառերի տեղ այդ ծածկագիրն է գործ ածուած։

2) Սակ — սուրհանդակ։